# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԾՈՎԻՆԱՐ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Ծովինար Գալստյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության փոստային ոլորտի քաղաքականության վարչության պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Բելառուսի Հանրապետություն,

ք. Մինսկ, 2019թ. հուլիսի 8-11-ը:

4. **Հրավիրող կողմը.**

Համաշխարհային փոստային միության միջազգային բյուրո:

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների համար Համաշխարհային փոստային միության տարածաշրջանային ռազմավարական համաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

Մինսկի համաժողովը 2019 թվականի ընթացքում Համաշխարհային փոստային միության կողմից կազմակերպվելիք ռազմավարական հարցերով 6 համաժողովներից մեկն էր: Համաժողովի հիմնական նպատակն էր 2021-2024թթ. Աբիջանյան փոստային ռազմավարության նախապատրաստումը, ինչպես նաև մինչև 2030թ. Փոստի զարգացման հայեցակարգի քննարկումը:

Համաժողովն անցկացվել է ներածական նիստի և երեք կլոր սեղանների քննարկումների միջոցով: Ներածական նիստի թեման էր <<Ստամբուլյան համաշխարհային փոստային

ռազմավարության իրականացման միջանկյալ արդյունքները>> և <<2021-2024թթ. Աբիջանյան փոստային ռազմավարության մշակումը>>: Կլոր սեղանների խորագիրն էր <<Տարածաշրջանային հեռանկարները՝ Կառավարություններ, Փոստային օպերատորներ և Կարգավորող մարմիններ>>: Համաժողովին բացման խոսքով հանդես եկան համապատասխանաբար Համաշխարհային փոստային միության (ՀՓՄ) միջազգային բյուրոյի գլխավոր տնօրեն Բիշար Հուսեյնը, <<ՓոստԵվրոպա>> Միության գլխավոր քարտուղար Բոտոնդ Սեբենը, Բելառուսի Հանրապետության կապի և տեղեկատվայնացման նախարար Կոնստանտին Շուլգանը:

## 7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ներածական նիստի ընթացքում ՀՓՄ-ի միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենի տեղակալ Պասկալ Կլիվազը, գրասենյակի գործադիր տնօրեն Մութուա Մուտհուսին և գիտահետազոտական և ռազմավարական ծրագրերի ղեկավար Ֆերնան Դե Բորբան ներկայացրեցին Ստամբուլյան համաշխարհային փոստային ռազմավարության իրականացման միջանկյալ արդյունքները և 2021-2024թթ. Աբիջանյան փոստային ռազմավարության հիմնական տեսլականը:

Առաջին կլոր սեղանի՝ <<Տարածաշրջանային հեռանկարները՝ Կառավարություններ>> ժամանակ ելույթներով հանդես են եկել Կապի տարածաշրջանային համագործակցության գործադիր կոմիտեի գլխավոր տնօրեն Նուրունդին Մուխիտդինովը, Բելառուսի Հանրապետության կապի և տեղեկատվայնացման նախարարի տեղակալ Նատալյա Գորդեենկոն, Շվեյցարիայի OFCOM-ի կապի դաշնային գրասենյակի հեռահաղորդակցության և փոստային ծառայությունների վարչության ղեկավար Ռենե Կուոնին:

Երկրորդ կլոր սեղանի՝ <<Տարածաշրջանային հեռանկարները՝ Փոստային օպերատորներ>> ժամանակ ելույթներով հանդես են եկել <<Հայփոստ>> ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Ավագյանը, Էստոնիայի Հանրապետության <<Eesti Post>> ընկերության խորհրդի նախագահ Անսի Արումիլը:

Երրորդ կլոր սեղանի՝ <<Տարածաշրջանային հեռանկարները՝ Կարգավորող Մարմիններ>> ժամանակ ելույթներով հանդես են եկել Բելառուսի Հանրապետության կապի և տեղեկատվայնացման նախարարի տեղակալ Նատալյա Գորդեենկոն և Սերբիայի

հեռահաղորդակցության և փոստային ծառայությունների գործակալության փոստային կարգավորումների վարչության պետ Նիկոլա Տրուբինտը:

Եզրափակիչ խոսքերով ներկայացան ՀՓՄ-ի միջազգային բյուրոյի գլխավոր տնօրեն Բիշար Հուսեյնը և գլխավոր տնօրենի տեղակալ Պասկալ Կլիվազը:

Համաժողովի ընթացքում տեղի է ունեցել հանդիպում Պանաֆրիկյան փոստային միության (PAPU) գլխավոր քարտուղար Յունուս Ջիբրինեի հետ, որի ընթացքում վերջինս տեղեկացրել է, որ 2020թ. կայանալիք ՀՓՄ-ի 27-րդ համագումարի ժամանակ ՀՓՄ-ի միջազգային բյուրոյի տնօրենի տեղակալի պաշտոնի ընտրություններում իր թեկնածությունը առաջադրելու մասին:

Մոլդովայի, Ուկրաինայի, Վրաստանի և Իսպանիայի փոստային ադմինիստրացիայի ներկայացուցիչների հետ տեղի են ունեցել քննարկումներ՝ ս.թ. սեպտեմբերի 23-26-ը Ժնևում կայանալիք ՀՓՄ-ի 3-րդ արտահերթ Համագումարի օրակարգում ընդգրկված նամակագրական թղթակցության վճարումների մեթոդաբանության վերանայման հարցի վերաբերյալ:

Համաժողովի շրջանակներում տեղի ունեցավ Կապի տարածաշրջանային համագործակցության (ԿՏՀ) մասնակիցների ոչ պաշտոնական հանդիպումը: Հանդիպման օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. ԿՏՀ-ի կապի վարչակազմերի Համաշխարհային փոստային միության 3-րդ արտահերթ համագումարի նախապատրաստման մասին.
2. ՀՓՄ-ի 145-ամյակին նվիրված միջոցառումներին ԿՏՀ-ի կապի վարչակազմերի մասնակցության մասին.
3. ԿՏՀ-ի փոստային հանձնաժողովի շրջանակներում ստեղծված Համաշխարհային փոստային միության հետ իրականացվող աշխատանքների գծով Աշխատանքային խմբի նախագահի ընտրության մասին:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

ԿՏՀ-ի մասնակիցների ոչ պաշտոնական հանդիպման ավարտին կազմվել է հանդիպման արձանագրությունը (կցվում է):

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հանդիպման ընթացքում կատարված առաջարկությունները և դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները ներառված են արձանագրության մեջ:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը.**

Ծովինար Գալստյան

15.07.2019թ.